ՆՈՐ-ԴԱՐ

№ 68 ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հ.աբաթ, 17 Ապրիլի 1899 Հ.աբաթ, 17 Ապրիլի ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 68

Տարեկան՝ 10 րուբլի, վեց ամիսը 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Թիֆլիսում ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.
բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատունը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis, Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի սուն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բաժին՝ 3 կ., բեկլամների համար կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. — Յարութեան տօնը։
Եկեղեցական կարգերի աղաւաղումներ։
Քրոնիկոն.—Լուրեր։
Մեզ գրում են. Ղամարլուից։
Լուրեր Թիւրքիայից։
Մամուլի շուրջը։
Իզմիրի ս. Առաջնորդը։
Թղթակցութիւններ.—Ջուլֆի։
Քաղաքական. — Թիւրքիա։ Մակեդոնիա։ Կրետէ։ Ֆիլիպպեան կղզիները
Խառնուրդներ։
Հեռագրներ։
Բանասիրական.—Կարմիր հաւկիթը։
Ցեղակատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 16 ապրիլի 1899 թ.

ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ

Քրիստոնեայ աշխարհը վաղը, կիրակի օրը տօնում է Քրիստոնէութեան ամենամեծ և փառաւոր տօնը։

Ջատիկը քրիստոնեաների, ինչ դաւանութեան էլ որ պատկանում լինին դրանք, ամենասիրելի տօնն է։

Առաջիկայ կիրակի օրը Հայաստանեայց եկեղեցին իւր նուիրական կարգերով և փառաւոր ծեսերով տօնելու է Փրկչի յարութիւնը. աշխարհիս ամեն կողմը ցրուած հայութիւնը լսելու է հայոց եկեղեցու զանգակի ղողանջիւնը, որ հրաւիրում է քրիստոնեայ հայութիւնը իսէր, ի միութիւն

Քանի դարեր և տարիներ են անցել առաջին Զատկի տօնը կատարելուց յետոյ և քանիերորդ Զատիկն է, որ կատարում է քրիստոնեայ հայութիւնը, Հայաստանեայց Եկեղեցին։

Ազգեր եկել և գնացել են, տէրութիւնները են առաջ եկել, անհետացել. քրիստոնէութիւնն իսկ կրօնների, եկեղեցիների է բաժանուել, որոնք միմեանց դէմ կռիւ են մղել և միմեանց հալածել Քրիստոսի վարդապետութեան խորհուրդը, միտքը մնացել է անփոփոխ ու քրիստոնէութիւնը տօնել և տօնում է մինչև օրս Յարութեան տօնը։

Դաղտնիքն ինչումն է. գաղտնիք չկայ. բանը պարզ է և հասկանալի։ Ժողովուրդները, ազգերը առանց *կրօնի* ապրել չեն կարող. *նիւթը* չէ բաւականացնում մարդկանց։ Մարդ արարածը *միտք* ունի, *սիրտ* ունի. միտքը բանում է, սիրտն զգում, իսկ *կրօնը* միաց նում է սիրտն ու միտքը և խաղաղացնում։

Այն կրօնը, որ ամենից աւելի *կենդանի* է և ամենից աւելի զօրաւոր կերպով նիւթից բաղկացած և նիւթի մէջ ապրողու իւր գոյութեան պահպանութեան համար միշտ կռուող մարդկութեան միտքն ու սիրտն է միացնում ու բարձրացնում նիւթականից վերը և աւելի բարձր նպատակի է մօտեցնում, — այդ կրօնը պէտք է որ ամենից բարձրն ու ամենից ընդհանրականը լինի, հետևաբար և զարգացող մարդկութեան համար հաճելի կրօնը լինի։

Հաւատ, յոյս և սէր վարդապետող կրօնը միշտ և յաւիտեան գոյութիւն կունենայ, քանի որ մարդկութիւնը գոյութիւն ունի։ Եկեղեցիները, ծէսերը կըփոխուին, նոր ծէսեր կըմտցնուին, նոր եկեղեցիները կըհիմնուեն, բայց աշխարհը տեղից չարժող, և՛ միտք, և՛ սիրտ բարձրացնող և աստուածացնող վարդապետութիւնը, — հաւատի, յուսոյ և սիրոյ վարդապետութիւնը յաւիտեան կըմնայ։

Եւ երբ մենք տօնում ենք Զատիկը, տօնում ենք իսկապէս սիրոյ տօնը. երբ չես հաւատում, խաւար է չուրջդ. առանց հաւատքի առանց սիրոյ, ինչ միտք ունի գոյութիւնը։

Զատկական տօներից յետոյ, «Նոր-Դար»ի առաջիկայ համարը լոյս կըտեսնի հինգշաբթի օրը, ապրիլի 22-ին։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ԱՂԱՒԱՂՈՒՄՆԵՐ *)

Ր. — Առանց հրամանի պահքերի մասին որքան շատ բան ասենք, զարձեալ քիչ է։ Բայց հետաքրքրական են դրա սկզբնապատճառներն ու միջնադէպերը. — 1) քահանան գիտէք Մարկոսին խաթը է անում և առանց հրամանի պահում, որ յետոյ հրաման ստանայ, այն կողմից դուրս է գալիս Կիրակոսը թէ՝ ինձ էլ պահիր։ Երբ քահանան մերժում է, հրաման չլինելու պատճառով, նա իսկոյն զայրանում է և անվայել խօսքեր չալրտեցնելով քահանայի հասցէին՝ սպառնալիքներով քննագատում, որ իրեն էլ պահէ, թէ չէ... Խեղճ քահանան դրան էլ է պահում, իսկ այնուհետև դառիվայրից գլորուող քարի նման՝ սլանալով խըրտում է անվերջ խաթրների տղմի մէջ։ 2) Դործակալը չատ անդամ կամ ձեռագիր հրաման տալով, կամ ուղղակի բանաւոր կերպով պատուիրելով կատարել է տալիս պահքերը, որով սովորեցնում է քահանային օրինաւոր հրամանների վերայ երկրորդական կարծիք ունենալ։ 3) Ջատ է ընդհանրացած մանաւանդ այն անկարգ սովորութիւնը, որ յայորդը կամ գործակալն ընդունում, քահանան կատարում և ժողովուրդն էլ սովորում է երեի դիւրութեան (թէ ծուլութեան) համար կատարուած տասնեակ տարիների հրամանը միանգամից ստանալ. փոխանակ միանգամ ընդ միշտ կանոն դարձնելու և ժողովրդին էլ սովորեցնելու, որ իւրաքանչիւր պահքի համար անհրաժեշտ է օրինաւոր հրաման՝ անպատճառ պահքերից առաջ։ 4) Սակայն խղճի դէմ խօսած կըլինինք, եթէ այստեղ՝ ի պահիւ մեր արձակուն հովիւների չասենք թէ նրանք երբեմն ձգտում են, կարծէք, օրինաւորութիւն հաստատել, այսինքն օրինազանցներին պատժում և չատ անգամ մինչև վերջակէտը հալածում են. բայց ահա թէ ինչպէս. — մի անգամ գործակալը մի քահանայի պատժեց՝ անհրաման պահքերը կատարելու համար՝ պահանջելով և ստանալով նրանից մի գլուխ չաքար, մի գրուանքայ թէյ, մի լաւ մօթալ պանիր, մի տոպուզ սիկ ամենալաւ գինի, և հինգ րուբլի էլ փող՝ բոլորը յօգուտ Ս. աթոռի.—վերջին բառերն, ի հարկէ, լոկ ձևի համար արտասանեց գործակալն, ապա թէ ոչ, մեր յայորդների ու գործակալների Ս. աթոռից մեծագոյն մասը գնուում է իրենց եօթնախորշ գրպաններում։ Քահանան բոլոր պահանջներն ուրախութեամբ կատարեց, որովհետև եթէ բանը գործակալից անցնէր, Ս. աթոռի պահանջը եռապատիկ մեծ կըլինէր։ Բայց դեռ լսեցէք, թէ ինչպէս մի նոր փորձանքի մէջընկաւ նոյն քահանան։ Պատժուելու չարաթը մի պսակ է պատահում տէրը պահանջում է, որ քահանան պսակէ, վերջինս մերժում է, պատճառելով թէ անհրաման պսակի համար գործակալը տուգանք է վերցնում չաքար, թէյ, մոթալ, մի տիկ գինի և... փող։ Պսակատէրը կարկի պէս նրա գլխին է թափում բազմաթիւ օրինակներ անհրաման պսակների, ասելով. «բաս ինչու՞ ֆլանքեասի, ֆլանքիասի ու ֆլանքեասի պսակները արել ես. նրանք ինձնից լա՞ւ մարդ են, եա իմ փողս փո՞ղ չէ»։ Քահանան պատասխանում է. «հէրօրինածները, դէ տիւը էլ ինձ չահեցէք, որ տեղ ինգեած տեղը ես էլ կործկալի ռեխը մին պահ քցեմ, ոադ անեմ ջանջալը, դիա՞, թա չէ, համ անհրաման ինի, համ էլ վեց մանէթ. տրա երբան պէտք ամին էրկու մանէթ էլ տինեմ, որ անջաղ Աթոռահասը կոյանայ»։ Ջատ թէր և դէմ խօսելուց ու սակարկելուց յետոյ՝ վերջապէս համաձայնում են տասն մանէթ տալ՝ ամեն բան մէջը։ Բայց դիւղացին աչքերը բաց-բաց կարմիր տասանոց կըհանի՛ գրպանից։ «Դա՞, ա դէը, փող չկայ մօտներս, բաս հինչ անինք» ասում են հարևանքաւորները։ Իսկ տէրը չի համաձայնում։ Վերջապէս մէկը բերում է իւր բերդհանկ հարցանը քահանային տալիս իրեն գրաւ, որ միւս օրը փողը բերէ և հրացանն ըստանայ։ Քահանան հրացանը տուն ուղարկելով՝ պսակը կատարում է։ Եւ ահա միւս առաւօտը՝ լուսաբացին՝ հրացանի տէրը գլխի հետ գալիս, քահանային զարթեցնում է. «Ա՛ դէը, բերդանկաս էս սհաթիս տուր, թէ չէ. կրգամ տանդ բոնել կրտամ և կառնեմ թէ գողացել ես»։ Քահանան կկսարթան ուղեղով սարսափելի հետևանքներ գուշակելով այդ խօսքերից՝ վերադարձնում է հրացանն առանց մի կոպէկ ստանալու։ Այնուհետև չգիտենք թէ գործակալն ինչպէս պատժից քահանային. միայն գիտենք, որ քահանան պսակատիրոջից ոչինչ չստացաւ։ 5) Սակայն չատ անգամ քահանաները մեծ վարպետութեամբ են. գործ բռնում, որպէս զի գործակալի տուգանքի եռապատիկը ժողովրդից հանեն. այսպէս՝ խիստ չաճախ ամեն ինչ վերացրել են տալիս, կէս գիշերին պսակատրներին բերում եկեղեցի և յանկարծ կանգնում թէ՝ չհաս է, յայտարարութիւնը սխալ եմ գրել. քսան կամ երեսուն րուբլի տուէք, պսակեմ։ Ընթերցողին եմ թողնում երևակայել, թէ ինչ քստմնելի տեսարաններ կառաջանան անկիրթ ժողովրդի և Քրիստոսի փոխանորդի միջև... քահանան գլխարկը ծածկում և գաւազանը վերցնելով գնում է, չի ուզում պսակել։ Վերջապէս կատարում են նրա պահանջն ու պսակը կատարել տալիս։ 6) Կամ չատ անգամ հէնց գործակալին են պատժում, ամեն մէկ պսակատրոջից մի բան վերցնելով և աղքատութեան վկայական տալով, որ գործակալը քիչ ստանայ։ Իսկ որպէսզի նպատակին լաւ հասնին, հրամանն ստանալը յանձնարարում են գըզկզկուած, ցնցոտիների մէջ փաթաթուած մի մարդու, որ գնում և տասն մանէթանոց հրամանը երեք մանէթով է բերում, մի մանէթն էլ ինքը վերցնում, իբրև նեղութեան վարձ. (գիւղերում այս արհեստով ապրողներ էլ կան)։ 7) Բայց դուք չկարծէք թէ գործակալն էլ միշտ խաբւում է. օ՛, ամենամիամիտ քահանանան էլ՝ երկու ամիս գործակալութիւն անելուց յետոյ՝ արդէն ամենավարժ ուտողն է։ Ահա ձեղ մի դէպք.—գործակալի առաջ կանգնած են երկու գիւղացիներ.—Ջան, ախպէր, ասում են նրանք, ոտիդ մատաղ, պիանը պրծըցրու, մենք քինանք։—Պիանը ծեղանումն ա, ասում է գործակալը։—Է՛, ա ջան դէը, ախը կնկայ, ըրախի տէր ենք, խեղճ ենք, մեկ ենք, քեասիբ ենք. տիւ էլ մեր հէրն ես. բա որ տիւ էլ մեզ չպահես, էլ ով պէտք ա պահի. էրկու մանէթով եօլա քինաս։—Ութ մանէթ ա, պակաս կարելի չի, պատասխանեց գործակալը. բա ես էլ մեկ չեմ, ես էլ ունեմ կնիկ, ըրախա, տուն, տեղ, ղոնաղ, պիան, ես էլ ծեղանով եմ կառավարւում. հալա տիւք լաւ էք—վար էլ էք քինըմ, հունձ էլ էք անըմ, առուտուր էլ էք անըմ. ամա ես՝ իմ վարս էլ, հունձս էլ, առուտուրս էլ էս ա, տիւք մին դուխան օխտը տարի էք կենըմ, մին փափաղը տասը տարի էք տինըմ, մի ճոխտ տըրխով էլ սաղսարին անց էք կըցնըմ. համա ես՝ ամիսը մին շապո եմ փոխըմ, մինը հինգ մանէթանոց. տարին իրենք չորս վերարկու եմ կենըմ, ամեն մինը քառասուն մանէթ. ամիսը էրկու ճոխտ էլ սապուկ, ճոխտը տասնըչորս մանէթ։ Որ կենըմ էլ չեմ, ամօթ են անըմ, տնազ են տալիս։ Էս ամեն ծախսերս ծեղանից պէտք ա ստանամ. տիւք էլ ըտենց էք խօսըմ։ Ութ մանէթից՝ օխտը աթոռահաս ա, էրկու արասին վարդապետինն ա, մին արասին սումարանինն ա, մին արասին միռոնի, խաչամբուլն ա, էրկու չահին փէչատի փող։ Ինձ կըմնայ էրկու չահի։ Էս էրկու չահով պէտք ա համ ինձ պահեմ, համ տունս կառավարեմ, համ ծիխս կեարի տամ, համ էլ թուխտ թանակ, զալամ առնեմ, որ ձեղ համար հրաման, յայտարարութիւն կիրեմ. որ հիւանդանամ էլ, հաքիմի, դեղերանքի կինը պէտք ա էդ էրկու չահուց տիւս կեա...։ Այս երկար փաստաբանութիւններն այն արդիւնքն ունեցան, որ գիւղացիք երկու մանէթի վրայ մի արասի էլ *իրանց քիսից* դրին և մեկնեցին գործակալին։ Գործակալն սկսեց նոր գալի չարականները, որ թողնում ենք ընթերցողներին հրևակայելու։ Այնուհետև տեղի ունեցաւ մի քստմնելի սակարկութիւն, որի ընթացքում գիւղացիք երեք-չորս անգամ դուրս եկան, որ գնան, բայց հինգ րոպէից յետոյ կրկին վերադարձան, միշտ էլ մի-մի արասի աւելացնելով։ Ներքանք այդ արասիները հանում էին երբեմն փափախների ճեղքերից, երբեմն արխալուխի ծալքերից, երբեմն էլ ղոնաղների արանքից. էլ չենք ասում զբոսաններում կամ ուրիշ տեղ թագցրածները։ Այդ վարմունքը մեզ զարմացրեց, մանաւանդ որ գործակալը բացատրեց, թէ նզովեալներն այդպէս են անում, որ հաւատացնեն թէ՝ չունին։ Բայց մենք իրաւամբ կասկածեցինք, թէ երևի գործակալները սովորութիւն են ունեցել գրպաններն էլ նայելու, որի համար և գիւղացիք այդ օրինակ նախազգուշութիւնների դիմելու կարիք են զգում. վերջապէս գործակալն ստացաւ ութ րուբլին և հրամանատոմսի մէջ գրեց մի այնպիսի 7, որ 4-ի հետ ամեն մարդ հեշտութեամբ կըփոխէր (նոյն ձևով գրում են նաև 3 և 5-ը, 6-ը և 8-ը, 4-ը և 11-ը և այլն և այլն. երբեմն էլ տառերով են գրում և բ (2)-ն չփոթում թ-ի հետ, գ (3)-նդ (4)-ի հետ, ե (5)-ն՝ է (7)-ի հետ, մինչև անգամ դ-ն ե-ի հետ և այլն)։ Գիւղացիները գընալուց յետոյ գործակալը կոճղի վրայ պարզապէս գրեց չորս րուբլի, իսկ նրանց յետևից ուղարկեց եօթն բեռ անէծք ու հայհոյանք։ Այս գործակալը, առանց չափազանցութեան ենք ասում, բարեխիղճներից մէկն է։

Գ.—Թէ *որքան* կամայականութիւն է տիրապետում մեր հոգևոր գործերում, երևում է ի միջի այլոց և նրանից, որ անհրաման պսակներ կատարող քահանաներից միայն խեղճերն են պատժւում. իսկ որոնք առանձին կերպով տեսնում են յայորդին, կամ որոնցից վերջինս ակնածում է (մի զարմանաք, ոսկեայ չղթաներով կաշկանդուած յայորդները չատ են լինում), այն ժամանակ ոչ միայն չիմանալու է գրւում յանցանքը, այլ և բացուելու դէպքում պաշտօնապէս արգարացուցիչ փաստեր ևս չատ են յերիւրւում։ Սրա համար մենք փառաւոր ապացոյցներ ունինք։

(Կըշարունակուի)

Քչոն.

ՔՐՈՆԻԿՈՆ

Թիֆլիսի գատական պալատի պրոկուրորի օգնական Վորոնովը և առանձին կարևոր գործերի քննիչ Ըբէլն ապրիլի 14-ին այցելեցին Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը քաղաքային ինքնավարութեան պաշտօնատար անձերի դէմ Կովկասի բարձր իշխանութեան յարուցած դատական գործին վերաբերեալ մի քանի խնդիրներ պարզելու համար։

— Կովկասի կառավարչապետի օգնական գեն.-լեյտ. Ս. Ս. Փրեզէն ապրիլի 15-ին այցելեց պարսից շահի երկրորդ որդի պրինց Զուաուֆ Սուլթան-Մանսուր-Միրզային, որը, դրանից յետոյ, փոխ այցի գնաց կառավարչապետի օգնականի մօտ։ Նոյն օրը պրինցին այցելութիւն տուին Թիֆլիսի պարսից հոգևորականութեան և վաճառականութեան ներկայացուցիչները։ Նորին բարձրութիւնը երկաթուղու երեկոյեան գնացքով մեկնեց Բագու, որտեղից կուղևորուի Թեհրան։ Պրինցին, ի միջի այլոց, ուղեկցում է Պետերբուրգի պարսից դեսպանը,

*) Տես «Նոր-Դար» № 67.

ՀԱՍՄԻԿ ՀԱՅՍՄԱՆ

(Հատիկներ ուսուցչի մը կենսագրութենէն)

Ըսուած է որ շատ սիրտեր միայն մէկ անգամ կը սիրեն, ինչպէս որ շատ ոտքեր միայն մէկ անգամ կը կոխեն նոյն ճամբան։ Ես ալ մէկ անգամ սիրեցի, եւ այդ մէկ անգամ ալ ինծի համար եղաւ ամբողջ կեանքը։ Ան ինծի համար եղաւ ամէն ինչ, ան ինծի համար եղաւ ոչինչ։ Ան ինծի համար եղաւ ամէն ինչ, երբ ես կը սիրէի զինք, ան ինծի համար եղաւ ոչինչ, երբ ան չսիրեց զիս։

Ես ան ատեն ուսուցչուհի էի Ս. գիւղին մէջ։ Ան ալ նոյն գիւղին մէջ կը բնակէր, ինծմէ քանի մը տուն հեռու։ Ան ալ ուսուցչուհի էր, բայց ոչ թէ գիւղի, այլ քաղաքի մը մէջ։ Ան ամէն տարի ամառնային արձակուրդին կու գար իր ծնողքին մօտ, որոնք գիւղին մէջ կը բնակէին։

Ես զինք առաջին անգամ տեսայ եկեղեցւոյ մէջ։ Ան ատեն ան տասնվեց տարեկան աղջիկ մըն էր։ Ես զինք տեսայ եւ սիրեցի։ Ան ատեն ես ալ տասնվեց տարեկան պատանի մըն էի

Ի ԱՐԴՅՈՔ ԴԱՐՁԵԼ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Ինչպես հայտնի է, Ռուսաստանի հայ ազգաբնակչության մեծ մասը ապրում է Կովկասում, որտեղ նրանք կազմում են ամբողջ բնակչության մոտ 1/3-ը։ Մնացած հայերը ցրված են Ռուսաստանի տարբեր քաղաքներում, հիմնականում առևտրով զբաղվելու համար։ Հայերի մեծ մասը ունի ոչ միայն ռուսական, այլև հայկական անձնագրեր։ Ռուսական անձնագրերը հայերին տրվում են հեշտությամբ, իսկ հայկական անձնագրերը ստանալ շատ դժվար է։ Հայկական անձնագրերը տրվում են միայն Կովկասում, և դրանք ստանալու համար պետք է ներկայանալ Կովկասի նահանգապետին։ Ռուսական անձնագրերը տրվում են ամենուր, ուր կա ոստիկանական բաժանմունք։

Ռուսական անձնագրերի հեշտ ձեռքբերումը հայերի համար մեծ նշանակություն ունի։ Ռուսական անձնագրով հայերը կարող են ազատ ապրել Ռուսաստանի ցանկացած քաղաքում, ինչպես նաև արտասահմանում։ Հայկական անձնագրով նրանք ստիպված են ապրել միայն Կովկասում։ Ռուսական անձնագրերի տրամադրման հեշտությունը հայերի համար մեծ նշանակություն ունի նաև այն պատճառով, որ ռուսական անձնագրերի տրամադրման ժամանակ ոստիկանությունը հայերի նկատմամբ ավելի քիչ կասկածամիտ է, քան հայկական անձնագրերի տրամադրման ժամանակ։

Ռուսական անձնագրերի տրամադրման հեշտությունը հայերի համար մեծ նշանակություն ունի նաև այն պատճառով, որ ռուսական անձնագրերի տրամադրման ժամանակ ոստիկանությունը հայերի նկատմամբ ավելի քիչ կասկածամիտ է, քան հայկական անձնագրերի տրամադրման ժամանակ։

Ռուսական անձնագրերի հեշտ ձեռքբերումը հայերի համար մեծ նշանակություն ունի նաև այն պատճառով, որ ռուսական անձնագրերի տրամադրման ժամանակ ոստիկանությունը հայերի նկատմամբ ավելի քիչ կասկածամիտ է, քան հայկական անձնագրերի տրամադրման ժամանակ։

Ռուսական անձնագրերի հեշտ ձեռքբերումը հայերի համար մեծ նշանակություն ունի նաև այն պատճառով, որ ռուսական անձնագրերի տրամադրման ժամանակ ոստիկանությունը հայերի նկատմամբ ավելի քիչ կասկածամիտ է, քան հայկական անձնագրերի տրամադրման ժամանակ։

Ռուսական անձնագրերի հեշտ ձեռքբերումը հայերի համար մեծ նշանակություն ունի նաև այն պատճառով, որ ռուսական անձնագրերի տրամադրման ժամանակ ոստիկանությունը հայերի նկատմամբ ավելի քիչ կասկածամիտ է, քան հայկական անձնագրերի տրամադրման ժամանակ։

Ռուսական անձնագրերի հեշտ ձեռքբերումը հայերի համար մեծ նշանակություն ունի նաև այն պատճառով, որ ռուսական անձնագրերի տրամադրման ժամանակ ոստիկանությունը հայերի նկատմամբ ավելի քիչ կասկածամիտ է, քան հայկական անձնագրերի տրամադրման ժամանակ։

Ռուսական անձնագրերի հեշտ ձեռքբերումը հայերի համար մեծ նշանակություն ունի նաև այն պատճառով, որ ռուսական անձնագրերի տրամադրման ժամանակ ոստիկանությունը հայերի նկատմամբ ավելի քիչ կասկածամիտ է, քան հայկական անձնագրերի տրամադրման ժամանակ։

Ռուսական անձնագրերի հեշտ ձեռքբերումը հայերի համար մեծ նշանակություն ունի նաև այն պատճառով, որ ռուսական անձնագրերի տրամադրման ժամանակ ոստիկանությունը հայերի նկատմամբ ավելի քիչ կասկածամիտ է, քան հայկական անձնագրերի տրամադրման ժամանակ։

Ռուսական անձնագրերի հեշտ ձեռքբերումը հայերի համար մեծ նշանակություն ունի նաև այն պատճառով, որ ռուսական անձնագրերի տրամադրման ժամանակ ոստիկանությունը հայերի նկատմամբ ավելի քիչ կասկածամիտ է, քան հայկական անձնագրերի տրամադրման ժամանակ։

Ռուսական անձնագրերի հեշտ ձեռքբերումը հայերի համար մեծ նշանակություն ունի նաև այն պատճառով, որ ռուսական անձնագրերի տրամադրման ժամանակ ոստիկանությունը հայերի նկատմամբ ավելի քիչ կասկածամիտ է, քան հայկական անձնագրերի տրամադրման ժամանակ։

Ռուսական անձնագրերի հեշտ ձեռքբերումը հայերի համար մեծ նշանակություն ունի նաև այն պատճառով, որ ռուսական անձնագրերի տրամադրման ժամանակ ոստիկանությունը հայերի նկատմամբ ավելի քիչ կասկածամիտ է, քան հայկական անձնագրերի տրամադրման ժամանակ։

րով կանոններ է մշակել, ժողովրդի վրդին կապել, այն էլ չի կատարում. Վեհափառ Հայրապետի կոնդակը կարդում է և էլի քիչ է մնում թէ դրոշակ վերցնի և ամենքի գլուխն անցնի իր իշխանութեան դէմ։ «Ժամանակը թարս է», թարսիցն էլ թարս։ Եւ խեղճ ժողովրդին են անպատւում, թէ երկպառակւում է։

Շատ լաւ կըլինէր, եթէ Նորին Վեհափառութիւնը մի ուրիշ նախագահ նշանակէր ընարութիւնը ղեկավարելու և խաղաղ ժողովրդի մէջ համերաշխութիւնը պահելու համար։

Ընարող.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹԻՒՐՔԻԱ.—Թէև ալբանական համագումար ժողովներն արգելուած են, բայց դէպի ալբանացիները Դրան ունեցած համակրութիւնն արտայայտւում է ուրիշ կերպով։

Միւնխենի «Allg. Zeit.»-ի Կ. Պոլսի թղթակիցը գրում է, որ այս օրերս իբրեւ հրատարակուած է Ալբանիայում դպրոցական դասաւանդման մէջ ռեֆորմներ մտցնելու վերաբերմամբ։ Այդ իրադէպով հրամայւում է Իպեկում և միւս գաւառներում դպրոցները վերակազմել Թրքական միւս վարժարանների նման։ Ալբանիայի բարձրագոյն ուսումնարանները պէտք է կատարելագործուեն և բազմատակուին, իսկ Իպեկում գինուորական ուսումնարան պիտի հիմնուի։ Մտադրութիւն կայ Թուրքերէն լեզուն աւանդելու նաև քրիստոնեայ դպրոցներում աւելի ընդարձակ ծրագրով, քան մինչև այժմ էր։ Վերջապէս ալբանացի մեծամեծների շատ որդիներ ամեն տարի կուղարկուին Կ. Պոլիս իրենց ուսումն այնտեղ վերջացնելու։ Ներքին գործերի մինիստրութիւնը կարգադրել է հարկաւոր միջոցներն ուղարկել Ալբանիա այդ ռեֆորմներն իրագործելու համար։

—

ՄԱԿԵԴՈՆԻԱ.—Ծոյներն ու սերբերը Կոսովոյի վիլայէթում իրար մէջ դաշն են կռել միասին գործելու բուլղարների դէմ։ Երկու ազգութիւնների մի-քանի մեծամեծների կողմից այս օրերս մի յուշագիր է յուղարկուած սուլթանին, որով փապիշահին հաղորդում են, թէ ինչ պատրաստութիւններ են տեսնում բուլղարական յեղափոխական մասնաժողովները, և յայտարարում են, որ իրենք, յոյներն ու սերբերը գոհ են Մակեդոնիա յում տիրող այժմեան կարգերից, հետևաբար և հաւանութիւն չեն տալիս բուլղարների ոտնձգութիւններին, որոնց իրենք ամեն կերպ պիտի ընդդիմադրեն։

—

ԿՐԵՏԷ.—Հռոմից «Polit. Corresp.»-ին հաղորդում են, թէ Ռուսիայի, Ֆրանսիայի և Անգլիայի դեսպանների, Իտալիայի արտաքին գործերի մինիստրի նախագահութեամբ, տեղի ունեցած վերջին խորհրդակցութեան ժամանակ հաւանութիւն է գտած բարձրագոյն կոմիսար արքայազն Գէորգի մի առաջարկը, որով զուիցերացի մի բարձրաստիճան անձ պիտի հրաւիրուի Կրետէի ֆինանսները կազմակերպելու համար։ Այնուհետև չորս պետութիւնների ներկայացուցիչները որոշել են արքայազն Գէորգին առաջարկել, որ քաղաքական յանցաւորների թուում ներում չնորհուի նաև անցեալ տարուայ օգոստոսի 25-ի, 26-ի և 27-ի անկարգութիւններին մասնակցողներին, որոնք գրեթէ բացառապէս մահմեդականներ են։

—

ՖԻԼԻՊՊԵՆ ԿՂԶԻՆԵՐ.—Ամերիկացիների գործն այդ կղզիներում հետզհետէ վատ է գնում։ Այս օրերս նրանք թէև ոչ վճռական, բայց զգալի պարտութիւն կրեցին։ Գեներալ Լաուտոնի զօրագունդը ծուղակն ընկաւ և գերի բռնուեց։ Այդ պարտութիւնն ամերիկացիներին հարկադրեց ոչ թէ միայն դադարեցնել յարձակողական գործողութիւնները, այլ և հեռանալ Մանիլիայից դէպի հարաւ բռնած իրենց դիրքերից. այժմ նրանք իսկապէս սիրում են արշիպելագոսի մայրաքաղաքին միայն և մէկ էլ մի չնչին հող՝ Մանիլիայից դէպի հիւսիս։ Ամերիկական գիներալները յայտարարում են, որ կղզիները նուաճելու համար առնուազն հարկաւոր է 100,000 մարդ։ Այդ բանը Միացեալ Նահանգներում մեծ յուզում է յարուցել։ Զանազան կողմերից բողոքի ձայներ են լսւում աշխարհակալական քաղաքականութեան դէմ, և նախագահ Մակ-Կինլէյը չփոթուած է, մանաւանդ, որ բողոքողների թուումն է և իր ամենաազդեցիկ կողմնակիցներից մէկը, այն է Մինեսոտայի նահանգապետը։ Ամենից վատն այն է, որ յիշեալ նահանգապետը տեղեկագրել է, թէ Ֆիլիպպեան կղզիներում գործող կամաւոր զինուորների 13-րդ գունդը միաձայն ցանկանում է վերադառնալ հայրենիք. իսկ Դակոտայի սենատոր Պետտիգրիան Մակ Կինլէյին մի նամակ է ուղարկել, որի մէջ պահանջում է, որ այդ նահանգի բոլոր կամաւոր զինուորները յետ կանչուին, որովհետև նրանք յայտարարում են, որ կառավարութիւնապօրինի է վարում իրենց Մանիլեայում պահելով։ Այժմ լրագրները խոստովանւում են, որ կամաւոր զինուորներով չի կարելի ընդարձակ նուաճումները անել. պէտք է դրա համար մեծ զօրաբանակ կազմակերպել։ Բայց այդ բանին վճռապէս դէմ են ինչպէս խնայողութեան, այնպէս և ազատութեան կողմնակիցները։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Արտակարգ ծերբակալում.—Բազէչում ունգարիայ այս օրերս ձերբակալուած է քաղաքապետը և նրա հետ միասին քաղաքային խորհրդի բոլոր իրաւասունները։ Բանից երևում է, որ գիշերները նրանք քաղաքային խորհրդարանի տակ գտնուած նկուղի մէջ ուսումնական կեղծ դրամ են կտրում։ Ձերբակալման ժամանակ նրանք ատրճանակ են պարպել և վիրաւորել մի ժանդարմի։

—

Արբեցողութեան դեղթափը. — Զուիցերիայում ս. Իւրան անունով մի աղբիւր կայ, որի ջուրն արբածներին բժշկելու յատկութիւնն ունի։ Ցեղացիները ասում են, թէ այն ասպետ մեծ է նրա զօրութիւնը, որ երբ արսէնտի և այլ ըմպելիների մէջ խառնեն, խմիչքի ազդեցութիւնն անմիջապէս կընուազի։ Դոկտ. Լիօնէլ՝ հմուտ գիտնականը՝ Զ. զարուց մնացած մի ձեռագիր է գտել, որի մէջ կայ այդ աղբիւրի վերաբերեալ աւանդութեան ծագումը։

Ս. Իւրան մի ճգնաւոր էր, որ Ուսրմոնի լեռներում էր ապրում։ Ժողովուրդը միշտ նրա ճգնատունն էր գալիս, որովհետև կրօնաւորը սուրբի համբաւ էր վայելում և հրաշագործ էր։ Նոյն տեղի հոգևոր պետի կինը մի օր ս. Իւրանի մօտ է գալիս և պատմելուց յետոյ, թէ իր ամուսինը չարունակ արբում և ծեծում է իրեն, ազաչում է ս. Իւրանին, որ իւր բոլոր կարողութիւնը գործ ածէ՝ իր ամուսնուն ապաշխելու համար։ Ս. Իւրանը պատուիրում է այդ կնոջ, որ ճգնարանի աղբիւրից եղջիւրով ջուր առնէ և խմեցնէ իր ամուսնուն։ Աւանդութիւնն ասում է, թէ մարդը բժշկուեց և մեռնելուց յետոյ իր բոլոր հողերը սուրբին կտակեց՝ մի մենաստան շինելու համար այդ աղբիւրի եղած տեղում։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՊԱՐԻԶ, 13 ապրիլի. — «Figaro»-ն հրատարակում է կապիտան Կիւինէի ցուցմունքները։ Վկան ասում է, թէ ինքը հաւատացած է, որ Դրայֆուսն է բորդերոյի հեղինակը, իսկ Պատի դը-Կլամը գնդապետ Հանրիին վերագրուած կեղծ դոկումենտի հեղինակն է։

«Matin»-ը հաղորդում է, որ տիկին Էսթերհազին այսօր ապահարզանի խնդիրք է տալիս։

«Echo de Paris»-ի ասելով, վճռաբեկ ատեանը իր վերջնական վճիռը կըյայտնի մինչև մայիսի 20-ը։

ՀՌՈՄ. Սենատ։ Աֆրիկայի վերաբերմամբ Անգլո-Ֆրանսիական համաձայնութեան մասին եղած հարցմունքին պատասխանելով, Կանեւարոն Անգլիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի Կեդրոնական Ասիային տիրելու պատմական տեսութիւնն արաւ և հաղորդեց, թէ Անգլիան և Ֆարանսիան բարեկամօրէն վստահացրել են, որ իրենք ոչ մի բանի չպիտի ձեռնարկեն Թրիպոլսի դէմ և թէ Թրիպոլսի ու Կեդրոնական Աֆրիկայի միջև առևտրական յարաբերութիւնները չեն խանգարուիլ։ Ցետագայ հակաճառութիւնների ընթացքում Կանեւարոն պնդում էր, որ Իտալիայի դաշնակիցներից ոչոք անվըստահութիւն չի ստեղծում դէպի Իտալիան։

ՊԱՐԻԶ. 14 ապրիլի.—Ուղղիչ ոստիկանութեան դատարանը պլեբիսցիտաւոր մասնաժողովների նախագահ բարոն Լեգուին դատապարտեց 16 ֆր. տուգանքի։

ԼՈՆԴՈՆ.—Ռուսաց դեսպան Ստաալն այսօր մի պատգամաւորութիւն ընդունեց «խաչակիրների խաղաղ արշաւանքին» մասնակցողների կողմից։ Պատգամաւորների թուումն էր Սաէդը։ Պատգամաւորութիւնն աջողութեան ամենասրտագին բարեմաղթութիւններ արեց խաղաղութեան կոնգրեսին։ Ստաալը յիրմագին շնորհակալութիւն յայտնեց և ասաց, թէ Ցարին կըհաղորդէ այդ մասին, որովհետև չուտով պիտի մեկնէ Ռուսիա։ Անգլիայի մասնակցութիւնը կոնֆերենցիային՝ վերջնիս գոհացուցիչ հետևանք ունենալու էական պայման է համարեան։

ՊԱՐԻԶ. Դելկասսէն նախագահ Լուբէի կողմից այսօր իշխան Ուրուսովին յանձնեց «Պատուաւոր Լէգիոնի» մեծ խաչի շքանշանը։

Հակահրէական լիգի նախագահ Դերենին ուղղիչ ոստիկանութեան դատարանն այսօր դատապարտեց 16 ֆր. տուգանքի։

Վճռաբեկ ատեանը որոշեց լսել Պատի դը-Կլամի ցուցմունքները։

ՎԵՆՆԱ.—Նախկին մինիստր նախագահ Հոհենվարտը վախճանուեց։

ՊԱՐԻԶ. — Կիւինէն, չարունակելով իր ցուցմունքները, առաջ է բերում 1895 թ. յունուարի 17 ին մի պաշտօնատար անձի Շվարցկոպենի գրած նամակը, որը կարևոր է ճանաչուած և որի մէջ, ակնարկելով Պերիէի հրաժարականը, հեղինակն աւելացնում է. «Դրայֆուսի վերաբերմամբ հանդիստ ենք։ Վերի վերջոյ գտնում են, որ ես լաւ եմ վարուել»։ Վկան առաջ է բերում և ուրիշ դոկումենտներ և կրկին անգամ ասում է, թէ ինքը համոզուած է, որ Դրայֆուսը մեղաւոր է մինչև անգամ այն դէպքում էս, եթէ նա չլինի բորդերոյի հեղինակը։

ՊԱՐԻԶ. — Քաղաքային խորհրդարանում նախաճաշ տեղի ունեցաւ Պետերբուրգի քաղաքապետ Լէլեանովի պատուին։ Հիւրերի թուումն էին Դիւպուին, Դելկասսէն, իշխան Ուրուսովը։ Քաղաքային խորհրդի փոխ-նախագահ Վէբերը Պարիզ քաղաքի կողմից իր բաժակաճառի մէջ աջողութիւն մաղթեց զինաթափի գործին, որի համար պարտական են Ռուսիայի մեծահոգի ձեռնարկութիւնը։ Այնուհետև Վէբերն առաջարկեց Պետերբուրգի քաղաքային խորհրդի կենացը, որին երախտագիտութեան և համակրութեան զգացումներ յայտնեց և խնդրեց Լէլեանովին, որ պարիզեցիների զգացումների թարգմանը լինի Պետերբուրգի բնակիչների առաջ։ Դիւպուին առաջարկեց Կայսրի և Կայսերական տան կենացը։ Իշխան Ուրուսովն առաջարկեց, նախագահ Լուբէի և Պարիզ քաղաքի կենացը։ Լէլեանովը շնորհակալութիւն յայտնեց ցոյց արուած ընդունելութեան համար, որը կարող է միայն ամրապնդել երկու ազգերի միջև եղած կապը։ Ի վերջոյ գրաֆ Սիւգորն առաջարկեց երկու պետութիւններին ևս օգուտ բերող ռուս ֆրանսիական դաշնակցութեան կենացը։

ԲՈՒԴԱՊԵՍՏ, 15 ապրիլի.—Պատգամաւորների ժողով։ Ֆրանց Մայօրի այն հարցին, թէ արտաքին գործերի մինիստրը մտադիր է արդեօք չինական ծովափին հող վերցնել կապալով կամ արգէն վերցրել է,—Սէլլը պատասխանում է, որ արտաքին գործերի մինիստրը ներկայումս միայն չունի հող ձեռք բերելու Չինաստանում. արդէն հող ձեռք բերած լինելու մասին խօսք անգամ չի կարող լինել։ Մայօրի յայտնած այն ցանկութիւնը, թէ պէտք է զարգացնել առևտրական յարաբերութիւնները և Ունգարիան պէտք է մասնակցի ծայրագոյն Ափեղքում եղած ձգտումներին,—այդ բանը, ի հարկէ, սրտին մօտ պէտք է լինի դունել. բայց կառավարութիւնը կարող է միայն զարկ տալ, այլ և խրախուսել և հովանաւորել առևտրական շահերը, և այնուհետև իրեն առևտրական աշխարհի գործն է վաճառականներ գտնելը և գործերը հիմնելը։ Ունգարիան, ժրաջղագործ, զուրկ է ձեռներէց ոգուց։ Այն էլ ճիշտ է, որ պատերազմական նաւատորմիղն այդ բանին համապատասխան միջոցներ չունի, բայց այսպիսի գործում վճռական նշանակութիւն ունին ֆրանսիական շարժառիթները։ Ի դէպս, եթէ ունգարական առևտրական աշխարհն այդ կողմից ձգտումներ ցոյց տայ, այն ժամանակ արտաքին գործերի մինիստրը, կառավարութեան համաձայնութեամբ, չի մերժիլ նրանց պաշտպանել և եռանդով խրախուսել։ (Ընդհանուր ծերմադին ծափեր)։

ՊԱՐԻԶ.—Լուբէն ընդունեց Լէլեանովին։

ՍՈՓԻԱ — Կառավարութիւնը հրաւէր ստացաւ Հապէի կոնֆերենցիային մասնակցելու։ Միակ պատգամաւոր նշանակուում է Պետերբուրգի բուլղարական գործակալ Ստանչևը։

ՈՒԱՇԻՆԳՏՈՆ.—Մակ Կինլէյը հաստատեց Գերմանիայի և Ամերիկայի միջև կարել անցկացնելու ծրագիրը։ Այս բանը նշան են համարում, որ Միացեալ Նահանգները ցանկանում են բարեկամական յարաբերութիւններ պահպանել Գերմանիայի հետ։

Խմբագիր-հրատարակիչ՝

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼ. Հ. ՀԲԱՏ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1899-ին լոյս են տեսել

153. ՋԵՍՍԻԿԱՑԻ ԱՌԱՋԻՆ ԱՂՕԹՔԸ, Թարգմ. Պերճ Պռոշեանի. 20 կ.
154. ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՆԳԼԻԱՑԻՆ, Հաւուփի. Թրգ. օր. Շ. Տ.—Ն. 05 կ.
155. ՀԻՆԱՑ ԱԲՆԵՐԸ, Հաւուփի. Թրգմ. օր. Շ. Տ.—Ն . . 03 կ.
156. ՍՂԵՓՈՍԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ և ՄՈՎՍ. ԽՈՐԵՆԱՑԻ. Ստ. Մալխասեանի. . . . . 40 կ.

Դիմել՝ Тифлисъ, Тифлисское Общество Изданія Армянскихъ книгъ, կամ Tiflis (Russie) Société de la Publication des livres arméniens.

(53) 5—3

ԴՐԻՄՕ և ԸՆԿ. ՍՐՍԿՈՒՄՆ
ՄԱՏԻԿՕՑԻՑ
Պատրաստուած է բացառապէս մաքիկայի (Վերատվիանի բոյս) տերևներից։
ԴԵՊՈՆ ՊԱՐԻԶՈՒՄ
Գիւղատրծներ ԴՐԻՄՕ և ԸՆԿ.
8, Rue Vivienne.
և դեղատներում

(M.) 20006 9—5



(M.) № 35889 52—4

ЖЕНІЕ СПОСОБОМЪ ЛЕТЮРКЪ ДЕ РОЗЬЕ 20% БОЛЬШЕ АРОМАТИЧЕСК. ЧАСТЕЙ
ЖЕНЫЙ КОФЕ
ПРОДАЖА ВЕЗДѢ С.СІУ и К°

(M.) 35811 26—2

С.П.Б. ТЕХНО-ХИМИЧЕСКОЙ ЛАБОРАТОРІИ
ПОСЛѢДНІЯ НОВОСТИ:
„ФИГАРО", „РЕКОРДЪ"
ЛУ́ЧШІЯ ТУАЛЕТНЫЯ МЫЛА
Пріятный освѣжающій ароматъ смягчаютъ кожу, придаютъ нѣжность и бѣлизну.
ПРОДАЮТСЯ ВЕЗДѢ. Просимъ остерегаться подражаній и требовать на этикетахъ слово: „ТЕХНО".
Главный складъ: С.-Петербургъ, Коломенская ул. № 12.

(M.) 51949 18—13.

АКЦІОНЕРНОЕ ОБЩЕСТВО
РЕЛЬСЫ КОЛЕСА ВАГОНЫ ПАРОВОЗЫ СТРѢЛКИ ПОВОР. КРУГИ.
МАШИНЫ КОТЛЫ ЛЕБЕДКИ КОПРЫ ЭЛЕВАТОРЫ КРАНЫ.
„АРТУРЪ КОППЕЛЬ"
С.-ПЕТЕРБУРГЪ, Невскій № 1. ОТДѢЛЕНІЯ: Москва, Варшава, Одесса, Владивостокъ, Гельсингфорсъ.

(M.) № 19681 2—1

Дозв. цензурою Тифлисъ, 16-го апрѣля дня, 1899 г. Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова, Голов. проспектъ домъ № 12.—Телефонъ № 387